

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

(Օտարաբարակացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшакъ“)

Խմբագրատունը բաց է առաւօտան 10—2 ժամ
(Նացի կիրակի և տոն օրերին):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լիգուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՄՇԱԿ

„ՄՇԱԿ“ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱ- ԿԱՆ ԼՐԱԳԻՐ 1880 ԹԻՒՆ

ԿԸ ՀՐԵՏԱՐԵԿՎԻ ԸՄԵՆ ՕՐ, բացի տոն և տոնների հե-
տեւալ օրերին:

Լրագրի դիմողը և պրօգրամման նոյն են մնում: Մենք ստանում
ենք ՍԵՓԵԿԱՆ ՀԵՌԵՐԻՆԵՐԻ: «ՄՇԱԿ» տարեկան գինը
10 ռուբլ է, կէս տարվան 6 ռուբլ: Գրվել կարելի է ՄԻԸՅՆ
ԽՄԻՆԻՐԵՏԻՆԵՆ մէջ:

ԸՄԵՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատր:
Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեւալ հասցեով ТИФ-
ЛИСЪ Редакция „Мшакъ“.

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾԻՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն: Հայերը և նրանց
քաղաքական գաղափարները: Ներքին լուրեր:
Արտաքին տեսութիւն: Նախալ Թիֆլիսից:
—Խառն լուրեր:—Մշակիչ: Ներառվածներ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԳՐԱԿԱՆ
ԳՐԱԿԱՌՆԵՐԸ

Ռուսաց «Нedья» շաբաթաթերթի №
39—40-ի մէջ, յիշեալ վերնագրով, տպված
էր մի հետաքրքիր քաղաքական խոսակցան
«Nuova Antologia» պարբերական հրատարա-
կութիւնից, որը հարկաւոր ենք համարում
ամբողջապէս հաղորդել մեր ընթերցողներին:
Յիշեալ յօդուածը մի համառօտութիւն է պ.
Բրուսիայի ընդարձակ աշխատանքութիւնից,
որ վերաբերում է Հայաստանի աշխարհազը-
րական և տեղագրական նշանակութեանը և
առհասարակ հայերի կոչմանը, որոնք բնակ-
վում են ռուսական, տաճկական և պարսկա-
կան Հայաստանում: Պարսկ Բրուսիայից, որպէս
երևում է, մեծ ուշադրութեամբ ուսումնա-
սիրել է բոլոր փաստերը, որ վերաբերում են
Հայոց երկրին, կարգացել է համարեա ամեն
շարադրութիւնները, որոնք մեր դարում գր-
ված են եղել նրա մասին, և խիստ ճարտա-
րութեամբ հաւաքել է ամբողջացրել է ա-
պացոյցները: Բոլոր յօդուածը կազմված է
մի հիմնական գաղափարի վրա, որ անմիջա-
պէս վերաբերում է Ռուսաստանին: Հեղինակը,
ուշադրութեամբ ուսումնասիրելով մեր երկի-
րը, գալիս է հետեւեալ եզրակացութիւններին,
—Թէ հայերը ռուսաց տիրապետութեան
ներքոյ աւելի լաւ են ապրում, քան թէ նը-
րանք, որ գտնվում են պարսից և թիւրքաց
Հպատակութեան մէջ. թէ պարսկական և
մանաւանդ տաճկական հայերի թշուառու-

թիւնները խիստ սատիկ և անտանելի են,
և Ներսիսյան պարտաւոր է ազատել նրանց,
այսինքն ազատել Բ. Դրան Եւրոպ. Թէ հայերը
հոգնաւ չեն, այլ պէտք է գտնվեն որ և իցէ
պետութեան բարձրագոյն հովանաւորութեան
ներքոյ, որը իր կողմից պէտք է անտարակոյս
չը դիպչէ ոչ նրանց կրօնին, ոչ նրանց վարդմի
սովորութիւններին և ոչ նրանց տեղական ինք-
նավարութեանը: Եւ վերջապէս պատուելի հե-
ղինակը այն եզրակացութեան է հասնում, թէ
վերոյիշեալ պայմանների կատարվելուց յետոյ,
Հայաստանի միմեանցից բաժանված այժմեան
երեք մասները—Ռուսական, պարսկական և տաճ-
կական—պէտք է ընկնեն մի գործը ինքնակալի
բարձրագոյն իշխանութեան ներքոյ, և մի այս-
պիսի իշխանութիւն, զանազան բնականապէս
առաջ եկած հանգամանքների պատճառով,
պէտք է և կարող է լինել միայն Ռուսաստա-
նը:

«Հայաստանը այժմ բաժանված է Պարս-
կաստանի, Ռուսաստանի և Տաճկաստանի
մէջ: Պարսկաստանի մէջ կան մօտ 150—
170 հազար հայեր, Ռուսաստանում մօտ
900,000, իսկ Տաճկաստանում 2 միլիոն:
Պարսկաստանի և Տաճկաստանի հայերի մասին
վեճակագրական տեղեկութիւնների թերու-
թեան պատճառով, թւանշանների այս բա-
տուցութիւնը խիստ դժուարին է: Առհասարակ
երկրագնդի վրա բնակվում են 4½ միլիոն
հայեր: Կը նշանակէ, մէկ միլիոնի չափ ցրը-
ված են զանազան կողմեր: Մօտ 200,000
բնակվում են Կ. Պոլսում և սակաւ չեն Բօյ-
զարիայի զանազան քաղաքներում: Բուսինիա-
յում, Յունաստանում: Հայերին կարելի է
հանդիպել Արշիպելագոսի բոլոր կղզիներում,
Կայրէշում, ուր, օրինակ, հայազգի Նուբար
փաշան էր Ֆինանների մինիստր —այլ և
նրանց կարելի է տեսնել Միջին Ասիայի շատ
քաղաքների մէջ և մինչև անգամ Չինաստա-
նում: Բրիտանական Հնդկաստանում նրանք
բնակվում են Թուրք աւելի քան 25,000. Նը-
րանք են պատկանում խոշոր առևտրական և
բանկային տները Բօմբէյի, Մադրասի և Կալ-
կաթայի մէջ: Նրբեմն, հին աշխարհի ժա-

մանակ և քրիստոնէութեան սկզբի դարերում,
հայերը ներկայացնում էին մի քաջ և պատե-
րազմական ազգ, բայց հետզհետէ նրանք փո-
խեցին իրանց պատերազմական բնաւորու-
թիւնը և ստացան առևտրական ժողովրդի
խաղաղատէր հակոյններ: Նրանք ունէին ըն-
դարձակ վաճառականութիւն Պարսկաստանում,
Սիրիայում և ամբողջ Անատոլիայում: Իսկ յու-
նաց կայսրութեան և արաբական խալիֆ-
ների ժամանակ նրանց էին պատ-
կանում Բիւզանդիայի, Մակեդոնիայի, Ան-
տիոքի, Դամասկոսի և Նիկիտոսի բանկերը ու
բազարները: Նրանք վաճառականութիւն ու-
նէին և Հնդկաստանի հետ: Ամերիկայի գործն-
վելը թէև նուազեցրեց նրանց արևելեան
վաճառականութիւնը, բայց թիւրքերի և Պօլ-
սում զեւեղվելը չը կարողացաւ արգելել նը-
րանց ընդարձակ իրանց գործունէութիւնը
Բալկանեան թերակղզու վրա և Միջերկրական
ծովի արևելեան ամբողջ եզրերի վրա: Նրանք
ստացան դրամական գործիչների ոչ միայն
վարկը, այլ նշանաւոր եղան, որպէս ուղղա-
տէր, իրանց խոստովանելով և պայմանները
կատարող վաճառականներ, որոնք եռանդով
օգնութիւն էին հասցնում ոչ միայն մանաւ-
որ անձներին, այլ և պետութիւններին, որ-
պէս էին ռուսաց, տաճկաց և պարսից, երբ
չ ընդհատուէր իրանց շահերը:
«Հայը գործունէ է, ճարպիկ է և խնայող է,
ինչպէս յոյն կամ հրէյան, և յոյն ու հրէ-
յի նման ձգտում է դրամական վաստակի ե-
տեւից. բայց նրա խելքը ոչ այնքան լուսա-
ւալ է, որպէս յունականը: Նա չէ սիրում
կոյր անձնավաստակութիւն, նա հեռու է
պահում իրան բախտախնդրութիւնից, նա
գործում է շատ, բայց գործում է զգուշու-
թեամբ: Հայը օտարազգիներին ծանօթ է իր
արժանաւորութիւններով որպէս դրամական
գործիչ, որպէս հրէյայի հարազատ եղբայրը:
Եւ իրաւ, այսպէս է յայտնվում նա իր հայ-
րենիքից դուրս, օտարութեան մէջ, ուր նը-
րան հանդիպում են ուրիշ երկրացիք: Խնայող
կարող է նա պարագլուխ պանդիտութեան մէջ,
եթէ ոչ վաճառականութեամբ: Պատերազմել
նա չէ սիրում և չէ ցանկանում: Նրբ նա բը-
նակվում է իր տանը, և քանի դեռ դաղթած
չէ, ի հարկէ, դարձեալ չէ արհամարհում
վաճառականութիւնը, բայց հայ ժողովրդի
ահագին մեծամասնութեան համար երկրա-
գործութիւնը է ամենապիւրել պարագլուխը,
իսկ հողը—ամենաթանկագին սեպհականու-
թիւն: Հաստատաբնակ հայը ունի մէկ ցան-
կութիւն միայն—հանգստութեամբ հողի տէր
դառնալ, հանգստութեամբ մշակել նրան և
կերակրել նրա արդիւնաբերութիւնով, և նրա
հետ միասին անարգել կերպով պաշտել իր
ընտրած կրօնը: Նա ոչ ոքին չէ դիպչում նա
խիստ զգոյշ է, և կարծում է, եթէ ինքը ոչ
ոքին չէ վշտացնի, ուրեմն իրան էլ չեն վըշ-
տացնի: Այդ մտածութիւնը չանհետացաւ և
տաճկական իշխանութեան ներքոյ, ուր նրա
զգուշութիւնը հասնում է մինչև յանցաւոր
երկրատուութեան, և դրա համար նրանից պատ-
րաստվում է խաղաղատէր և բարի հպատակ:
Եթէ նա ձգում է հողը և սկսում է վաճա-
ռականութիւն անել, այդ պէս պատճառով է,
որ նրան թոյլ չեն տալիս օգուտ քաղել իր
երկրագործական աշխատութիւնների պտուղ-
ներով: Նրան, որպէս կալուածատիրոջ, կողոպ-

տում են թէ քուրդերը, թէ չէրքեսները և
թէ տաճկաց կառավարութեան գործակաւոր-
ները: Եթէ նա դուրս է փախչում իր հայ-
րենիքից, փախչում է ոչ այն պատճառով, որ չէ
սիրում նրան, այլ նրա համար, որ ապրուստը
հայրենի երկրի վրա դառնում է անտանելի,
և այդ մասին, ակամայ կերպով կարգելով հո-
ղից, նա աշխատում է առևտրականութեամբ
մի բան ձեռք բերել, որ դիւրացնէ իր գաղ-
թականութեան ցանկութիւնը: Հայրենիքի
սահմաններից դուրս նա ձեռք է գարկում
վաճառականութեան, որպէս իր ապրուստի
միակ և մատչելի միջոցին:

Վերոյիշեալ մտածութիւնները պատուելի
հեղինակից մէջ բերելուց յետոյ, «Нedья»
շաբաթաթերթի պ. յօդուածագիրը աւելաց-
նում է. «Պէտք չը կայ ռուսաց ընթերցողնե-
րի համար, որոնց յիշողութեան մէջ դեռ
թարմ մնացած է 1876—1878 տարիների
պարբերական գրականութիւնը, կրկին նկա-
րագրել թէ որպէս են վարվում հայերի հետ
Տաճկաստանի ոչ—մահմետական հպատակները
և Թիւրքիայի կառավարութեան ներկայացու-
ցիչները: Աւելորդ է ապացուցանել թէ
բազմաթիւ շարժառիթներ կան, որ անջա-
տում են հայերին նախ երկրագործական աշ-
խատութիւնից և ապա իրանց հայրենիքից:
Հայերի վերաբերութեամբ Բերլինի աւագածո-
ղով հետեւեալների մասին: Հայերը աղաչում
էին, որ նրանց չը մոռանան: Եւ նրանց չը
մոռացան: Բայց Անգլիան իր ձեռքը գցելով
Փոքր Ասիայի վերահսկողութիւնը վերջ դրեց
մնացած պետութիւնների խնամակալութեանը,
իր վրա առնելով, որպէս բոլոր բնակիչների, նոյն-
պէս և հայերի դուրսիւնը բարեբեկութեան հոգաա-
րութիւնը: Այդ ձեռնարկութիւնը պրինցիպի
կողմից գահացուցիչ էր, բայց իրականապէս
չը բերեց ոչ մի օգուտ նեղեալներին, զոնէ
մինչև այսօր: Ի դուր նրանք ուղարկում էին
իրանց կալիսկոպոսներին և պատգամաւորներին
բոլոր պետութիւնների մօտ, խնդրելով, որ
սպասեն նրանց այն զարհուրանքներից, որ
կը հասնեն նրանց, երբ ռուսաց զօրքը կը
թողնէ իրանց երկրը: Վիպլոմատիւսն ափսոս-
տում էր նրանց, և հանգստացնում էր անգ-
լիական վերահսկողութեամբ: Ռուսաց զօրքե-
րը վերջապէս թողեցին Հայաստանը, և նրա
անբախտ բնակիչներին սպասած բոլոր սարսա-
փելիքները թափվեցան նրանց գլխի վրա:
Հայաստանում գործվում էր և այժմ գործ-
վում է մի և նոյնը, ինչ որ մի քանի տարի
առաջ կատարվեցաւ Բուսինիայում և Բօլգա-
րիայում: Միայն Ներսիսյան դադարեց պարա-
պել այդ բոլոր զարհուրանքներով, իսկ դիպ-
լոմատիւսն հանգստանում էր նրանով, որ
Անգլիան զօրացրեց իր հիւպատոսների կազ-
մակերպութիւնը թէ որակութեան և թէ
քանակութեան կողմից: Բայց, որպէս լսվում
է, դրանից հայերի համար ոչինչ հանգստու-
թիւն առաջ չեկաւ, և ամեն մի դէպքում
դիպլոմատիւսի գործողութիւնները, Բերլինի
աւագածոլովի վճիռ հակառակ չը կարողա-
ցան փոխել հայոց ժողովրդի ոչ բնաւորու-
թիւնը, ոչ ձգտումները և ոչ գաղափարները:
Խնչ կը շինէ այդ բոլորից դիպլոմատիւսն—
մենք, ի հարկէ, չը դիտենք, և հազիւ թէ
գիտեն իրանց դիպլոմատները, մինչև անգամ
Մեծ Բրիտանիայի դիպլոմատները: Մենք

Եպիսկոպոսը կը պատասխանէ թէ այդ տա-
լին ամուսնութիւնը բռնութեամբ կատարուած
աղջիկը երբէք հաւանութիւն չէր տուած, և կ'
նախան ինչ պարտաւորութիւններ որ կան պա-
մը օրինաւոր ընկեր համար ի գործ չեն դրու-
ւ և քանի որ աղջիկը ի սկզբանէ սիրահարուած
բռնաւորադպրական հայու մը հետ, եպիսկոպոսն
ուանց ապօրէն գործ մը բրած լինելու պատկ-
էր երկուքն:

2. Ուշնախանի լուսաւորչագական հայերն

իրենց անուաններն արձանագրուած է. երկար	Թ
նն կանցնի, օր մ'ալ այս իսկը հայերն կը տես-	հ
որ իրենց հողի տէրներն իրենց էնն, այլ այլ	բ
հերերն զաղաքը անկողի իսլամաց անուան	ը
արձանագրուած է. իսկը հայ գլուղացին որ	Թ
գլխերէն լեղտին ալ անմահօթի էր, այսպէս Նն-	դ

ընդհանուր կարգով, որոնցից մեկը կարող է լինել անհատական, իսկ մյուսը՝ օրենսդրական:

ժամուցանելով Վանյայ կուսակալ Հասան
յն ի անգղիական միութն-հիւպատոս պ.
թիւ թիւ մի զվե մի տեղի ունեցած է
Նկատմամբ. Բլեյթն կը պահանջէ որ կա-
պրելը իրմէ թողութիւն խնդրէ, բայան կը
վ. Անգղիոյ կառավարութիւնը Բլեյթնի ըն-
տեղ

15 կ., երկրորդ 95 բ., երրորդ 94 բ.
 , չորրորդ 94 բ., ներքին առաջին 5%
 սուռթեան տոմսին արժէ 232 բ., 50
 իրկորդ 265 բ. 5 կ., արևելեան առաջին
 սուռթեան տոմսին արժէ 90 բ., 62 կ.,
 րդ 90 բ., 37 կ., րդ 7 86

[illegible]

